

Ն.Ա. Խաչատրյան
ԿԱՐԵՆ ՄԻԱՔԱՅԵԼՅԱՆԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ՄԻ ՇԱՐՔ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանալի բառեր՝ Կարեն Միքայելյան, արձակագիր, բռնադատված, պատմվածք, հերոս, ժողովածու, անտիպ, քնարական շունչ, թեմա, օտար, ողբերգություն, հայրենիք:

Ключевые слова: Карен Микаелян, писатель, осужденный, история, герой, коллекции, неопубликованные, поэтический дух, темы, чуждые, трагедия, родина.

Keywords: Karen Mikaelian, writer, violated, story, hero, collection, unpublished, theme, alien, tragedy, homeland.

Անհատի պաշտամունքի տարիներին անհիմն բռնադատված մտավորականներից է Կարեն Միքայելյանը: Գրականագիտության մեջ շատ քիչ է խոսվել արձակագրի մասին, իսկ նրա ստեղծագործությունները ուսումնասիրությունների գրեթե չեն արժանացել:

Միքայելյանի ստեղծագործությունները, ժամանակի խորը կնիքն իրենց վրա կրելով, մի կողմից՝ պատկերում են հայոց ծանր վիճակը, նոր մարդու ձևավորումն ու քաղաքական հետապնդումները, մյուս կողմից էլ՝ սփյուռքահայության օտարացող բարքերը և հայ մարդու գերագույն բաղձանքը՝ հզոր հայրենիք ունենալու երազանքը:

Անհատի պաշտամունքի տարիներին անհիմն բռնադատված մտավորականներից է Կարեն (Գերասիմ) Սարգիսի Միքայելյանը (27.04.1883 – 13.12.1941), որին հետմահու արդարացնելուց հետո մասամբ վերանայվեց նաև նրա թողած գրական ժառանգությունը, և 1961-ին Երևանում տպագրվեց «Կեցցեն հաղթվածները» պատմվածքների ժողովածուն: Այն կազմող 12 պատմվածքները վերցված են նախորդ ժողովածուներից: Ստեղծագործությունների մի հսկայական մաս վերատպման է արժանի, շատերն էլ դեռ անտիպ են (քաղաքական հալածանքներ ներկայացնող «Երբ ես խելագար էի...» վեպը (1927թ.), «Անմահություն» նովելների ժողովածուն (1941թ.)): Գրականագիտու-

թյան մեջ շատ քիչ է խոսվել արձակագրի մասին, իսկ նրա ստեղծագործությունները ուսումնասիրությունների գրեթե չեն արժանացել: Միքայելյանը քաջածանոթ էր իրեն նախորդած գրական ավանդներին, որոնցից ժառանգեց հակիրճ, սեղմ պատմելաոճը, դիպուկ, առանց սեթևեթանքի, պարզ խոսքը: Հատկապես ուշագրավ են նրա քնարական շնչով գրված պատմվածքները («Ձմռան երեկո», «Էրֆուրտի ծրագիր», «Վարդանանց պատերազմը», «Մաքուլի խումբը», «Առաջին վիշտ», «Կեցցեն հաղթվածները», «Վրեժ» և այլն), ուր բնության շքեղ պատկերների կողքին ներկայացվում են մարդկային հոգեկան ապրումների՝ սիրո, ատելության, հիասթափության, հույզի ու կարոտի գեղեցիկ զուգահեռումներ: Միքայելյանի ստեղծագործություններում առկա են բանաստեղծական շունչը, առանց ավելորդ ջղաձգումների անամոք թախիժը, ավելի շատ ասվածի մեջ թաքնված չասված իրողությունը, ինչպես նաև ամենօրյա անտարբերության, սովորականի մեջ խնամքով ծպտված անսովորի հմայքը, որոնք գրողի տաղանդի, նրբանկատ ոգու ու քնարական-փիլիսոփայական մտքի վկաներն են:

Հետաքրքիր ու գրավիչ է Կ. Միքայելյանի գրելաոճը: Այն անկեղծություն է ներշնչում: Ընթանում է երբեմն զրույցի, ասող-լսողի, երկխոսության անմիջականությամբ, երբեմն էլ վերհուշի կամ հեղինակի կողմից քողարկված՝ իբրև թե երրորդ մարդու տեսանկյունից: Այս ձևերից յուրաքանչյուրն ունի իր գրավչությունը և համապատասխանում է ընտրված թեմային՝ մասշտաբի, պարզ ու անկեղծ դարձնելով ասելիքը: Մարդկային հասարակությունից միշտ էլ անբաժան է ողբերգությունը, սակայն դրա գիտակցումն է տարբեր Միքայելյանի կերտած հերոսների մեջ: Կյանքի հարցերի հարցը թաքնված է դրանում, առանց որի չէին լինի հակադրություններ, ուստի և կյանքը կդադարեր գոյություն ունենալուց: Մի շարք պատմվածքներում պատկերված է քաղաքաբնակների կյանքը, փողի գերիշխանությունը, առօրյա պայքարն անիրավ աշխարհի դեմ, որտեղ ամեն ինչ օտար է մարդկային ազնիվ հոգուն, և մարդու անտարբերությունը մարդու նկատմամբ տանում է դեպի կործանում: «Հացթուխ Սիմոն» պատմվածքում այդ բուրբ անտարբերությունն է, որ տապալվողի մեջ ծնում է չարություն և ատելություն: Հեշտ վաստակվող փողի ու ապահով կյանքի ետևից գնացել էր քաղաք, տեղափոխել նաև ընտանիքը, սակայն չդիմանալով նոր պայմաններին՝ հիվանդացել ու մահացել էին կինն ու երեխաները: Համոզված լինելով, որ քաղաքն է մեղավոր, այլ տեղ էր գնացել և փորձելով հարմարվել ճակատագրին՝ ապրել էր առանց տրտնջալու: Իսկ կյանքի մայրամուտին, երբ հիվանդ էր, սոված ու անօգնական, գտնում էր, որ սխալվել է՝ մտածելով, որ «Աշխարհումս հո՛ր բոլորն էլ երջանիկ չեն լինի, այն ժամանակ իսկի աշխարհս էլ աշխարհ չի լինի...»[1, էջ 20]: Գուցե այս համոզմամբ էլ մնար Սիմոնը, եթե շրջապատի անտարբերությունը չփոխեր նրա վերաբերմունքը կյանքի ու ճակատագրի հանդեպ: Բոլորն էլ գտնում էին, որ «ճակատագիրն էր այդպիսին»: «Վաղն էլ կընկնի ու կմեռնի», և առանց

կարեկցանքի ու աստուածանքի, կուշտ ու ապահով մարդիկ կասեն. «Ինչո՞ւ մեռավ, չկարողացավ ապրել, մեռավ», որովհետև կարողանալ ապրել բոլորը չէ, որ կարող են: Իր ողջ կյանքում բարի, հեզ ու խոնարհ հացթուխը մահից առաջ դառնում է ըմբոստ և անտարբերությունից ու արհամարհանքից ծնված չարությամբ վերջին շնչում գոջում է, որ թույն չի խառնել այն հացին, որը տարիներ շարունակ թխել է ուրիշների համար: Հեղինակը փորձում է շեշտը դնել անտարբերության վրա՝ գտնելով, որ աշխարհի ամենամեծ չարիքները դրանից են ծնվում: Մարդիկ պետք է բարեգութ լինեն միմյանց հանդեպ՝ հատկապես ծերերի ու հիվանդների, որոնք դրա կարիքն ավելի ունեն:

Հոգեբանական նման բարդ ապրումներ են ներկայացված Միքայելյանի գրեթե բոլոր պատմվածքներում: Նրա հերոսներն ավելի շատ խորհում են, մտորում, տվալստվում իրենց վերնուշերի ծանր ապրումներից («Վրեժ», «Հեքազ բաջին», «Վարդանանց պատերազմը», «Ձմռան երեկո» և այլն), քան գործում, ինչ-որ բան անում:

Այլ ճանապարհով է ընթանում բեռնակիր Վարդանի կյանքը: Նա ևս դժգոհ էր. «Շան կամ կատվի չափ տեր չենք մեր կյանքին» [6, էջ 43]: Հակադրվում է կյանքի հարվածներին, համամիտ չէ ընկերոջ ասածին, թե «Գուցե մեր ճակատագիրն էլ ա՞յս է»: Հացթուխ Միմոնից առաջադեմ լինելով՝ Վարդանը գտնում է իր տեղը կյանքում:

Ժամանակի գրականության խնդիրն էր պատկերել նոր մարդուն՝ իր իրավունքները ճանաչող անհատին: Միքայելյանն ունի մի շարք ստեղծագործություններ, որոնց հերոսները այդ վերափոխվածներն են: Լինելով հասարակական ակտիվ գործիչ՝ նա քաջ գիտակցում էր խորհրդային երկիր ստեղծելու դժվարությունները և գրեթե համոզված էր, որ հայ ժողովրդի ճակատագրում այն թարմ, ցավոտ ակոս է բացելու: Թշվառ հայրենիքի ողբերգական անցյալը, ծանր ներկան ու անորոշ ապագան դառնում են այն ազդակները, որոնց հիման վրա ծնվում են հայրենիքի թեմայով ստեղծագործությունները («Հայաստանի քարտեզը», «Անկախ Հայաստան», «Ըսեք՝ գրաբարը չմոռնան», «Allways», «Խաղաղականի ավերին», «Թզենու ստվերի տակ», «Լուսարարը» և այլն):

Արձակագիրը հայոց ողբերգության՝ տարագրության կողքով անտարբեր անցնել չէր կարող: Նա ներկայացնում է օտար ավերում ապրող հայերի, որոնք ֆիզիկապես ապրում են, սակայն հոգիներում դատարկություն է: Անցյալի ողբերգությունը, ամայացնելով նրանց հոգիները, ուրվականի պես հետևում է ամեն քայլափոխի: Օտար ավերում որպես հայ իրենց կորցրած մարդկանց հոգեկան ծանր ապրումներն ու երբեմն արտաքնապես անհոգ թվացող մղձավանջային կյանքը Միքայելյանը ներկայացնում է առանց ավելորդ հրճվանքի, ողջ թշվառությամբ ու մոռալությամբ: Հերոսներից շատերն այն օտարացած հայերն են, որոնք այնքան էլ չեն տառապում պատմական հայրենիքը կորցնելու ցավից: Ոմանք անգամ խորշում են հայ լինելուց և փորձում են հնարավորինս հեռու լինել հայրենիքից: «Առաքել» պատմվածքի շուշեցի

հերոսը պատերազմում վիրավորվելուց հետո հայրենիք չի վերադառնում, որովհետև ինչպես ինքն է ասում. «Էշս կորցրա՞լ եմ, թա՞ կլիսիս ճորի ա քացի տվալ»[5, էջ 55]: Իր ազգախույս գաղափարների մեջ ավելի հեռուն է գնում «Ինտերնացիոնալիստ» պատմվածքի գործարանատեր հերոսը և անամոթաբար հայտարարում. «Մոռացե՞ք իմ հայ ըլլալս» [4, էջ 56]: Հայաստանում պատերազմ չլինելու համար այնքանով է ուրախ, որ ստիպված չի լինի թշվառների համար կազմակերպված դրամահավաքին մասնակցել: «Allways» պատմվածքի հերոսն ու իր քույրը (վերջինս երկու աղջիկների հետ մի կերպ փախել է կոտորածներից՝ կորցնելով ամուսնուն ու երկու զավակներին), դեռևս հավատարիմ են իրենց արմատներին և մտահոգվում են Հայաստանի ու հայի ճակատագրով: Նրանց կողքին կան երիտասարդներ, որոնցից շատերը հայերեն չգիտեն և Հայաստանի հանդեպ անտարբեր են: Պատմվածքի հերոսն իր ցավն է հայտնում. «Գիտե՞ք ինչ ձուլարան է սա Ամերիկան: Ինչ որ Աբդուլ Համիդը ու «հաջորդները» չկրցան ընել հալածանքով ու կոտորածով, ըստնք կրնեն առանց բանտի ու կաթիլ արյան»[4, էջ 82]: «Էվուլլա», «Նահանջ» պատմվածքների հերոսները սփյուռքահայության այն օտարացող սերունդներն են, որոնք եթե նախնիներով, անցյալի հիշողություններով հայ են, ապա իրենց մտածելակերպով, վարքագծով ոչ մի ընդհանուր բան չունեն հայի իսկական տեսակի հետ, ուստի ապագայում ոչինչ են հայի և հայրենիքի համար: Նրանք տոթակեզ ավազի մեջ շոգիացող ջրի վերջին կաթիլներն են, որոնց համար հեղինակը մեծ ցավ է ապրում: Այս ողբերգության արմատը հայերի տեղահանությունն է ու եղեռնը, որը չնայած չի պատկերվում, սակայն սերունդների այս ապրելաձևը դրա անմիջական հետևանքն է:

Նախկին սոցիալիստ Արսեն Ռոստոմյանը («Նահանջ») ընդունակ չէ աշխատելու, արհեստ չունի, գոյատևել է գաղափարակից «ընկերների» հաշվին և երբ նրանցից գումար ստանալու հույսը կորցնում է, անիմաստ է դառնում նաև ապրելը: Թուլամորթից հանցագործ-մարդասպան կես քայլ է: «Բութ մատների հաստ եղունգները սեղմելով կնոջ փափուկ պարանոցը» [6, էջ 72], կարծես փորձում է խեղդել նաև իր անցած «փափուկ» կյանքն ու փուչ, անիմաստ սեփական գոյությունը:

«Էվուլլա» պատմվածքի հերոսն ապրում է միայն մի հանդուգն փիլիսոփայությամբ. «Էս աշխարհքը դոչաղի մեյդան է...»[1, էջ 29]: Նա հետապնդում է սրճարանում հարբածներին, թալանում և անհոգ հեռանում:

Օտար ափերում ապրողների մի մասն էլ կարոտով ու պարծանքով է հետևում Հայաստանի հզորացմանն ու շենացմանը («Խաղաղականի ափերին», «Միսիսիպի գետի պղտոր ջրերը», «Հայաստանի քարտեզը» և այլն): «Անկախ Հայաստան» պատմվածքում այնքան են հայրենակիցները հպարտանում Հայաստանի նորաստեղծ անկախությամբ, որ ամերիկացի լրագրողը նկատում է. «Եթե ունենք պետություն ու պետական բյուջե, ուրեմն կարող եք վճարել ձեր

պարտքերը, այն, որ արավ Ամերիկայում ձեր նախկին կառավարությունը» [4, էջ 33]:

Յուրօրինակ վերաբերմունք ունեն Միքայելյանի որոշ կերպարներ հայ-թուրքական հարաբերությունների և ընդհանրապես Հայաստանի անցյալի ու ապագայի վերաբերյալ («Փորձության ժամին», «Անկախ Հայաստան», «Հայաստանի քարտեզը»): «Փորձության ժամին» պատմվածքի հերոսները իրարամերժ կարծիքներ են հայտնում հայ-թուրքական կոտորածներից: Հերոսներից մեկը ելնում է «թուրքը, որ ոսկի էլ դառնա, գրպանդ մի դիր» կարգախոսից և թուրքերի դեմ կռվելու, վրեժ լուծելու կոչ է անում. «Պետք է կոտորել... Տասնյակ դարերով դրանք մեր արյունը ծծեցին, մեր ոսկորը քամեցին: Եթե նրանց յոթ պորտ պապի փորը պատռես, հայի հաց ու հայի արյուն դուրս կգա... Այժմ էլ հավատարիմ իրենց պապերի ավանդին, շարունակում են նրանց սկսած գործը, բավական է, որքան համբերեցինք: Պետք է, որ մենք էլ միանանք որպես մի մարդ և նրանց արածով նրանց պատասխանենք» [1, էջ 52]: Իսկ երիտասարդ ուսուցիչը գտնում է, որ բարեկամանան, իրար չկոտորեն, քանի որ և՛ հայն է տուժել, և՛ թուրքը այդ անընդմեջ կռիվներից: Ժամանակի թելադրանքով Միքայելյանն արտահայտում է բոլշևիկյան գաղափարներ, ուստի զգուշանալով սեփական խոսք ասելուց՝ հերոսի բերանով է ներկայացնում թուրքերից վրեժ լուծելու միտքը:

«Հայաստանի քարտեզը» փոքրիկ պատմվածքում Ամերիկայում տպագրվող հայկական թերթում հերթական անգամ տեսնելով ծովից ծով Հայաստանի քարտեզը՝ վրդովվում է. «Այսպիսի անմիտ քարտեզներով միայն մոլորեցնում են մեզ և գրգռում մեր հարևաններին» [4, էջ 27]: Հեղինակը հորդորում է ապրել ներկայով և ոչ թե անցյալը շահարկել: Մ.թ.ա. գոյություն ունեցած ծովից ծով Հայաստանով, որը մի՛ֆ է, ցավոք, հայերն ավելի են ոգևորվում, քան փոքր, բայց իրական Հայաստանով:

Արձակագիրն իր պատմվածքներում անդրադարձել է նաև հետամնաց բարքերին, ավանդական ապրելակերպին, սովորույթներին՝ իրենց ողջ հմայքով և երբեմն էլ կործանարար հետևանքներով («Հորեղբոր հարսանիքը», «Հեքազ բաջին», «Մահակ-Թումանը» և այլն): Կարեն Միքայելյանի ստեղծագործությունները, ժամանակի խորը կնիքն իրենց վրա կրելով, մի կողմից՝ պատկերում են հայ աշխատավորության ծանր վիճակը, նոր մարդու ձևավորումն ու քաղաքական հետապնդումները, մյուս կողմից էլ՝ սփյուռքահայության օտարացող բարքերը և հայ մարդու գերագույն բաղձանքը՝ հզոր հայրենիք ունենալու երազանքը:

Н.А. Хачатрян
Основные темы прозы Карена Микаеляна

В годы культа личности безпричинно репрессивным представителем интеллигенции является Карен Микаелян, произведения которого не удостоились литературоведческого изучения. Неся на себе глубокую печать времени, с одной стороны отражают тяжелое состояние армянского рабочего, а с другой стороны – отчуждающиеся манеры армянской диаспоры, и наивысшую мечту армянина – иметь мощную Родину.

N.A. Khachatryan
Main Themes of Karen Mikaelyan's Prose

During the years of the individual cult one of the forcibly repressed intellectuals was Karen Mikaelyan, whose works are not literary studied. They, carrying the deep stamp of time, from one side, delineate the hard state of the Armenian workmen, and from the other side – the aliening manners of the Armenian Diaspora and the highest wish of the Armenian man – the dream to have a powerful motherland.

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն

1. Կարեն Միքայելյան, Ջրկանքի հույզեր, Թիֆլիս, 1907
2. Կ. Միքայելյան, Ձմռան երեկո, Մոսկվա, 1912
3. Կ. Միքայելյան, Գյուղական հեռախոս, Փարիզ, 1926
4. Կ. Միքայելյան, Majestic, Մոսկվա, 1928
5. Կ. Միքայելյան, Գույների կռիվը, Մոսկվա, 1929
6. Կ. Միքայելյան, Կեցցեն հաղթածները, Երևան, 1961

Տեղեկություններ հեղինակի մասին

Խաչատրյան Նաիրա Արարատի – ք. գ. թ., դոցենտ, ՀՊՄՀ դասախոս, E-mail: mardavaz@mail.ru

Տրվել է խմբագրություն 10.06.2013.